



Փոխադարձ Կախվածության Հռչակագիր

<<OneShared.World>>-ը տարբեր մշակույթների, համայնքների, էթնիկ խմբերի, կազմակերպությունների, սուբյեկտների, կառույցների, սերունդների և ազգերի հետ համագործակցող շահագրգիռ անձանց լայնածավալ շարժում է, որի նպատակն է ապահովել ավելի բարեկեցիկ ապագա ողջ մարդկության և մեր ընդհանուր տան՝ Երկիր մոլորակի համար:

Մենք ձգտում ենք նպաստել մարդկանց ազատ կամարտահայտմանը՝ որպես մեր համընդհանուր հնարավորությունների կարևոր օղակ, ինչպես նաև փորձում ենք կարևոր և նպատակային փոփոխություններ մտցնել գործընթացների, կառուցվածքների, համակարգերի և արդյունքների մեջ, ինչը շոշափելիորեն կնպաստի մեր ընդհանուր կարիքների բավարարմանն ուղղված քայլերին:

Քովիդ-19 համավարակը մեզ հիշեցրեց, որ մենք բոլորս գլոբալ մարտահրավերների առաջ կանգնած մարդկային հասարակության մի մասն ենք: Ուստի, հասկանալով այդ, մենք

- Գտնում ենք*, որ միայն հոգատարությունը միմյանց, ինչպես նաև մեր մոլորակի կենսաբազմազանության և էկոհամակարգերի հանդեպ կարող է հիմք հանդիսանալ առողջ, ապահով և կայուն ապագայի համար:
- Հաստատում ենք* մեր փոխադարձ պատասխանատվությունը մեր ընդհանուր բարեկեցության համար:
- Վստահ ենք*, որ մարդկության հանդեպ հոգատարությունը սկսվում է մեզանից յուրաքանչյուրից, և որ մեր նպատակները, գործողությունները և ցանկալի արդյունքին ուղղված մեր ջանքերը պետք է համահունչ լինեն:
- Հավատում ենք*, որ նույնիսկ այս մեծ ճգնաժամի սպառնալիքները հաղթահարելի են ավելի բարեկեցիկ աշխարհ կառուցելուն ուղղված մեր միասնական ջանքերի շնորհիվ

Ելնելով վերոնշյալից՝ §OneShared.World-ը ընդունում է հետևյալ հռչակագիրը:

ՄԱԿ-ի կանոնադրությամբ, §Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագրով՝ և §Կայուն զարգացման նպատակներով՝ լավագույնս արտացոլված են մարդկության համընդհանուր և հիմնական ձգտումները, որոնց մենք լիովին աջակցում ենք:

Չնայած պետությունները և միջազգային հաստատությունները հսկայական ներդրում են ունեցել գլոբալ խաղաղության, անվտանգության, կայունության և բարեկեցության հաստատման գործում, այս սուբյեկտներն ապացուցել են, որ ի վիճակի չեն լիարժեքորեն բավարարել մեր կարևորագույն համընդհանուր կարիքները:

Ահա դրանցից մի քանիսը.

- Չախտովել է պատշաճ կանխարգելիչ ենթակառուցվածքների ստեղծումը՝ Քովիդ-19 ի նման գլոբալ համավարակից մեզ պաշտպանելու համար:
- Չախտովել է միջուկային, քիմիական, կիբեռ և զանգվածային ոչնչացման այլ զենքերի ահագնացող տարածման կանխարգելումը:
- Չախտովել է կլիմայի վտանգավոր փոփոխությունների կանխարգելումը և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը, ինչպես նաև չի հաջողվել պահպանել կենսաբազմազանության ապահով գոյատևումը և մեր մոլորակի կայունությունը:
- Չախտովել է առավել խոցելի խմբերին զերծ պահել քաղցից, թերսնումից, խտրականությունից, հիվանդություններից և անկարգություններից:
- Չախտովել է ստեղծել այնպիսի կառույցներ, որոնք բնական ռեսուրսների և ֆինանսական համակարգերի կառավարման, հզոր տեխնոլոգիաների կիրառման ժամանակ կառաջնորդվելին բարձր համամարդկային արժեքներով:

Այս համընդհանուր մարտահրավերներին դիմագրավելու մեր ոչ բավարար կարողությունների հիմքում ընկած են այն սկզբունքային տարբերությունները, որոնք առկա են մոլորակի բնակչության հավաքական պահանջումների և առանձին վերցրած ազգային կառավարությունների առաջնահերթությունների միջև:

Ներկայումս, երբ առանձին վերցրած պետությունները և միջազգային կազմակերպությունները շարունակում են մնալ գլոբալ մարտահրավերների հաղթահարման հիմնական դերակատարները, մենք կհաջողենք դիմագրավել դրանց միայն այն դեպքում, եթե զարգացնենք միասնական գործողությունների մեր հայեցակարգը և կարողությունները:

Այս ոգով մենք փորձում ենք մեր կարողությունների գլոբալ կառույցին ավելացնել երրորդ հենասյունը, որը վեր է կանգնած առանձին վերցրած պետություններից և նրանց կողմից ստեղծված առաջատար միջազգային հաստատություններից: Այս երրորդ հենասյունը ամբողջությամբ համապարփակ, գլոբալ սոցիալական շարժում և քաղաքական ուժ է, որն արտահայտում է համայն մարդկության ժողովրդավարական բնույթը:

Մենք հասկանում ենք, որ մեր մարդկային ձգտումները պետք է լրացնեն և ոգեշնչեն, այլ ոչ փոխարինեն այն հսկայածավալ աշխատանքներին, որոնք կատարվում են շատ կառավարությունների և միջազգային կառույցների կողմից:

Այս կառույցների բոլոր մակարդակների ղեկավարներից մենք պահանջում ենք կայացնել խելամիտ որոշումներ, որոնք ի գործ են համադրել ազգային շահերը գլոբալ հասարակական շահերի հետ՝ ի նպաստ բոլորի, անկախ աշխարհագրական կամ ծագումնաբանական տարբերություններից :

Մենք հավատում ենք, որ մեր շարժումը պետք է ամբողջովին ձևավորվի տեղական, տարածաշրջանային, ազգային և համաշխարհային մակարդակով միասին աշխատող անհատների, կազմակերպությունների և այլ մարմինների շուրջ:

Արժևորելով, որ նոր տեխնոլոգիաները աննախադեպ հնարավորություններ են ստեղծում համագործակցության համար, այնուամենայնիվ, մարդիկ, ովքեր նույնպես պետք է մասնակցեն այս գործընթացին, գլոբալ հաղորդակցության այս համակարգում դեռևս ներգրավված չեն:

Ընդունելով, որ բազմազանությունը մեր ամենամեծ ուժն է, մենք՝ անհատներս, տարբեր համայնքների, կազմակերպությունների, միավորների, ազգերի ներկայացուցիչներս, հայտարարում ենք, որ այս ամենում փոխկապակցված ենք, ունենք փոխադարձ պարտավորություններ և պատասխանատվություն:

Մենք պարտավորվում ենք՝

1. Աջակցել կանխատեսող, կանխարգելիչ և արձագանքող ենթակառուցվածքների ստեղծմանը՝ գոյություն ունեցող ընդհանուր սպառնալիքներից մեզ պաշտպանելու համար:
2. Ապահովել, որպեսզի մեզանից առավել թույլերը կարողանան վայելել նույն հիմնարար ազատությունները, ինչ նշանավորները և հզորները, որ մեր ընդհանրությունները առավել կարևորվում են մեր միջև առկա նշանակալի տարբերությունների համատեքստում, և մենք բոլորս կարող ենք ապրել հավասարապես արժեքավոր և արժանապատիվ կյանքով:
3. Ուղղակի և անուղղակի համագործակցել համայնքների, կազմակերպությունների, սուբյեկտների և ազգերի հետպաշտպանելու մեզ և

մեր ընդհանուր տունը:

4. Մտեղծել անվտանգ և կայուն գլոբալ միջավայր մեր մոլորակի բոլոր տեսակների և էկոհամակարգերի համար:
5. Երաշխավորել բոլորի, այդ թվում երեխաների առողջությունը, անվտանգությունն ու բարեկեցությունը և ապահովել նրանց համար պատշաճ կրթություն, առողջապահություն և անվտանգություն:
6. Աջակցել գեղարվեստական արտահայտչամիջոցների բոլոր դրսևորումներին, որոնք կարող են տարբեր մշակույթների միջև ձևավորել կապեր, հարգանք և հաղորդակցում:
7. Նպաստել մարդկային փոխհարաբերությունների խթանմանը՝ փոխադարձ ուշադրության, հարգանքի, կարեկցանքի և բարության միջոցով:

Ստորագրելով այս հռչակագիրը՝ մենք պարտավորվում ենք հնարավոր ամեն ինչ անել այս սկզբունքների իրագործման համար և կոչ ենք անում բոլոր մարդկանց, բոլոր կազմակերպություններին, սուբյեկտներին և ազգերին համախմբվել միասնական կերպով դիմակայելու մեր ամենահրատապ համընդհանուր մարտահրավերներին: Այդ նպատակով մենք՝ տարբեր երկրներում ապրող երկիր մոլորակի քաղաքացիներս, փոխադարձաբար խոստանում ենք միմյանց հետ կիսել մեր կյանքի էներգիան, ճակատագրով մեզ ընձեռնված հնարավորությունները և մեր սուրբ պատիվը: